

## ԱՐՏԱՍԱՅՄԱՆԵԱՆ ՔՐՈՆԻԿ

Յրանսիացեք 1870 թ. գէտ: Բարոյական զարթում և Պոլ Դեմարզենի բրոշյւրը շերկայ պարտականութիւնը: Վագներէ Լօենզերինը Պարեզում: Եւքսպերի Մակ-բէթը Պարիզում: Գերմանական դպրոցական օրէնքները: Վէլզենըուի թատրոնական նոր դրամածքը: Վըբ-ադան ծիծաղ: Դուքս գընչլարենսի մահը: Մ. Զերազէ նամակը Հայ Համայնքի կողմէց: Սոյսիւբիի պատասխանը: Ապիւրժոնի մահը: Մաննինգի մահը: Մեկենդիի մահը: Ադամսի մահը: Դատաստանական դործեր: Եւքսպերէ Լանըի VIII բեմի վրա: Պատկերահանգէտ: Folka-Lore'ի ժողովները: Իսպիայի կոլոնիական քաղաքականութիւնը: Յերզէնանդօ Մարտինիի գիրքը:

Ի՞նչ է կատարում Արտպալում—առաջադիմող ազգերի գրականութեան, գեղարվեստի, գիտութեան, մի խօսքով մարդկավիշ խելքի արտապտոթեան զանազան ճիւղերի մէջ:

Անա այս հարցերին պատասխան կը տայ կարելոյն չափ պարբերաբար «Մուրճ»-ի նոյն այս բաժինը:

1870 թ. չարաբաստիկ պատերազմից առաջ ամբողջ աշխարհին մտաւ և տոն տողը Պարիզն էր: Առաջին մենաշնորհը կը մնայ դեռ Պարիզի ձեռքում: Բայց երկրորդից նա մասամբ զրկւել է և այսօրու օրա ամենքը Պարիզի վրայ չեն սեեռել առաջու պէս իրանց հաշեացքները, թէև Պարիզը մնում է համաշխարհային քաղաքակրթութեան զարկերակներէց ամենանշանաւորը:

Այժմեան Ֆրանսիացիք մի չալոնի աստիճանով պակասացրել են իրանց գոռոզութիւնը և առաջու նման չեն կղզիանում, դոհանալով միմիայն Ֆրանսիացու խելքի արտադրութեամբ: Մի տասը տարի հազիւ լինի ինչ որ Ֆրանսիացիք սկսել են նշանաւոր չալով հետաքրքրւել օտար գրականութեամբ: Մի տասը տարի հազիւ կը լինի ինչ որ ռուս հեղինակները՝ Տուրգենևից, Դոստոեւիկուց սկսած մինչև Տոլստոյ թարգմանում են Ֆրանսերէնի, չալչտակութեամբ կարդացում և թէ վիճաբանութիւններ առաջ բերում և թէ ազգեցութեան հետեանքներ առաջադրում:

Անցեալ ամսին ամբողջ Պարիզի խօսակցութեան միակ առարկան էր Պոլ Դեմարզէնի բրոշյւրը՝ Ներկայ պարտականութիւնը<sup>1)</sup> վերնագրով:

<sup>1)</sup> Le devoir présent de M. Paul Desjardin.

Պոլ Դեժարդէնը՝ 30 տարին հաղիւ լրացած ճարտասանութեան պրոֆեսոր էր Բարոպական շարիքը նրան չափազանց վշտացրել էր Կեանքի ընթացքը նկատելով նրան թւում է որ աչս շարիքի մեծ մասը առաջ է եկել անբանից, որ ժամանակիս նշանաւար մարդիկը ինչպէս Ռենան, Գարսին, Տէն, Զորա դահավիժել են հին բարոյական լողէալները և նրանց տեղերը պարագայ թափուր թողել։ Իրան նպատակ դնելով մի հակակշիռ կազմել լիշեալների (որոնց նա մկրտում է «բացասականներ» մականունով) լուծող ազդեցութեան դէմ — նա զիմադրում է «դրականներին», որոնց սոսկ կեանքը, իւր ասելով, զօրեղ հաստատութիւն է բարիի հնարաւորութեան և բաւարարութեան»։ Եւ աչս վերջինների շարքում նա դասում է Տոլստոյին, Ֆրանսիացի բանաստեղծ Սիւլլի-Պրիւդոմին, Ֆուլէին, Սեկրետանին<sup>1)</sup> և ուրիշներին։

Դեժարդէնը գուշակում է «դրականներին» մօտազալ չաղթութիւնը գլխաւորապէս ան մի աչկ պատճառով, որ աչգ չաղթութիւնը պէտք է տեղի ունենաչ թէ բարոյականութեան տեսակէտից և թէ տրամաբանութեան։

Դեժարդէնի ասելով, դրականները՝ նպատակ ունենալով «նասարակական խաղաղութիւնը և բարւոքումը կամքի և սիրոյ զարգացմամբ» — պէտք է խուսափեն ամենաչն տեսակ ֆորմուլաներից, որոնք իւր ասելով, միայն շարիք են կազմում։

Աչ բարի նպատակին հասնելու համար Դեժարդէնի առաջարկած միջոցներից ամենից որոշը և գործնականները սրանք են։ «Նրեք տարին մի ժողովել կարծիքների փոխադարձութիւն շառաջ բերելու 40 տարւալ գրականութեան շարիքի առաջքն առնելու համար և նոն աչգ «պիղծ» (infame) դրականութիւնը արհամարանքի մէջ գցելու Պէտք է հաստատուի միահամուռ մի հազորակցութիւն, մի հոսանք ստեղծւի ան բոլոր մարդկանց մէջ, որոնք դաւանում են պարտականութեան հաւատը և նրան գործադրում»։...

Անշուշտ ընթերցողը կը նկատի, որ Դեժարդէնի «Պարտականութեան հաւատը» սերտ առնչութիւն ունի և արձագանք է Տոլստոյի մտքերին։

Գերմանական մտքերին Պարիզը արձագանք էր տւել, (ինչպէս որ աչգ գիտեն արդէն «Մուլրճ»-ի ընթերցողները) — անցեալ տարի մեծ դժւարութիւններով չաղողցրած՝ Ռ. Վազնիի Լօէնգրին օպերայի ներկայացումով։

Աչժմ անդլիական մտքերին ֆրանսիացիք արձագանք են տալիս ներկայացնելով Շեքսպիրի Մակբէթը<sup>2)</sup> Պարիզի Օդէօն թատրոնում։ Իրաւ է

1) Sully Prudhomme, Fouillé, Ch. Secretan.

2) Մակբէթը տպագրւած է Շեքսպիրի մակէց Եօթը տարի յետոյ, ուստի կասկածում են որ սա փոփոխութիւնների ենթարկւած չը լինի գերմանական չեղինակ Միդլտոնի (Middleton) ձեռքում։

սրանից առաջ ևս Պարիզում խաղացել ևն Շեքսպիրի ողբերգութիւնները, բայց ևս ղիտմամբ մէջ ևս բերում նորագուն արքա փորձերը ցոյց տալու համար թէ Ֆրանսիացիք առաջաւ նեղ, սահմանափակ Ֆրանսիացիքը չեն, սրանք ամենքին վաղեմի են կոչում:

Բայց ինչպէս որ առաջ արնպէս և պէտք Շեկսպիրը չաջողութիւն չունեցաւ. մասամբ արն բանից որ Մակբէթը ներկայացնում էին բառացի թարգմանութեամբ և թէ գլխաւորապէս նրանից որ առհասարակ Շեքսպիրը ճանաչած է Ֆրանսիայում իբր մի շատ ուշալիտ և շատ կոպիտ գրող:

Ֆրանսիացիների ասելով Մակբէթը մի վառ բանաստեղծական ֆարս է, բայց և սարսափելի ֆարս:

Մի կողմ թողնելով նոր դպրոցական օրէնքը ուսումնարանների մասին (տես «Մուրճ» № 2) գերմանացիների ուշագրութիւնը գրաւել էր անցեալ ամիս Վիլհելմ II կայսրի ցոյց տած համակրութիւնը դէպի Վիլհելմբրուխի (M. de Wildenbruch) մի նոր թատրոնական գրածքը:

«Մբբազան ծիծաղ» (Das heilige Lachen) ահա գրածքի վերնագիրը որը իսկապէս մի ֆէետրիա է 6 գործողութիւնից՝ հանդերձ բաւտով և երաժշտութեամբ: Պիեսայի ներկայացումը տեղի ունեցաւ շատ շքեղ, շատ ճոխ հազուատներով, շատ զարդարանքներով և մեքենախաղութիւններով <sup>1)</sup>: Որովհետև զաղտնի չէր մնացել հասարակութեանը թէ կապը ներկայ է եղել նոյն իսկ րեպետիցիային և թէ ներկայ է գտնւելու առաջին ներկայացման 4/16 փետր. — Schauspielhaus թատրոնի բոլոր տեղերը բռնւած էին թանգ վճարումներով:

Երկկողմը շատ հետաքրքիր էր. ծափահարութիւնների հետ միաժամանակ լսում էին շրւտցների կայսրի շնորհը ձեռք բերած հեղինակի հասցէին, իսկ ոմանք չը նպած կայսրի ներկայութեանը լանդգնում էին բնական չէլ հեղինակի փոխարէն մեքենավարին:

Ահա և գրածքի բովանդակութիւնը որ իսկապէս մի տենդենցիոզ ալլեգորիա է:

Բայց ամենից առաջ պէտք է իմանալ որ դուրս բերած ամեն մի անճնաւորութիւն—որ և է դադափարի մարմնացումն է: Արպէս՝ պ. Օպտիմուր (Optimus)—լաւատեսութիւնն է, Պեսսիմովը (Pessimoff)—հոռետեսութիւնը և այս վերջինիս կատաղի թշնամին է ծիծաղի աստածը (Lachgott)—Լախգոտը:

Այժմ երևակայացէք ձեզ որ Պեսսիմովը ամի բոլէ աշխարհքիս տէրը դառնալով թոճաւորում է հաւատը, չոքը, սէրը և արն ամենը ինչ որ կազմում է կեանքի արժանիքը, որ նա չաջողում է բաժանել ամուսիններին, որ նա ապստամբեցրել է ժողովուրդը թագաւորների դէմ և թերահաւատներին կրօնի դէմ: Օպտիմուրը սրա զոհերի թւումն է լինում: Անիմուրը (Ani-

<sup>1)</sup> Machinerie.

mus) 1) թողնում է իւր կնոջը—գեղեցկութեան ֆէեան, Բալց սրանք ունենում են մի որդի որ արագիւր Ադեբարը (Adebar) սրանց համար բերած է լինում: Այս որդին որ է ծիծաղաստածը նրանց կը հաշտեցնի և վերջին բողոքին Պետրմովը կը հեռանալ մի շիշի մէջ—ուր և նրան կը պահեն անջնաս դարձնելու համար— խծկած, փառքը կը լինի Օպտիմուսինը Գեղեցկութեան, Արդարութեան և Միծաղինը: Գարնանալին մի հրապուր (charme) կը տարածի նորից աշխարհիս կրեսին և սա կը լինի Նրջանկութեան ապաֆէոզը: Ընթերցողը տեսնում է որ նաև Գերմանիայում աշխատում են մաքառել հոռետեսութեան դէմ, մարտնչել ուշալական դրականութեան և սրա չափազանց շնաստակար համարած հետևանքների դէմ և որ այս գործին գլուխ է անցնում նոյն իսկ կայսրը՝ իւր հովանաւորութեան տակ առնելով վիշկալ հէքիաթանման լաւատէս մի երազագրութիւն՝ եթէ ներւի այս խօսքը:

Եւ այս հանգամանքը զուգարիպութիւն չէ որ Ռէչնի թէ ձախ և թէ աջ ակիրին միանման խնդիրներ են չարուցած, ոչ—սոքա արձագանք են Տըլտոտի բարոյական մտքերին և գաղափարներին:

Ամենքի վերջնական նպատակն է ամբողջալին բարօրութիւնը և երջանկութիւնը:

Թագաժառանգ դուքս դը Կլարէնսի վաղաժամ մահւան առիթով պ. Մ. Չերազ մի նամակ է ուղղում առաջին նախարար Սոլրիւրիին, որի մէջ նա, իբրև ներկայացուցիչ հալ համայնքի, չափնում է իւր խոր ցաւակցութիւնը այդ տխուր կորուստի մասին:

Պ. Սոլրիւրին ներկայացնում է այդ գրութիւնը Անգլիայի վիկտորիա թագուհուն և սրա անկեղծ շնորհակալութիւնների մասին նամակով չափնում պ. Չերազին:

Նոյն ամսում Անգլիան զրկեց մինը միւսի ետեից երկու նշանաւոր հոգեւորականներից՝ դրանք են կարդինալ Մաննինգը որի մասին լրագիրները բաւականաչափ տեղեկութիւններ հաղորդեցին և Spurgeon նշանաւոր բարոյիստ. քարոզիչը: Բապտիստ 2) ծնողների որդի Spurgeon-ը 1850 թ. 16 տարեկան—իրան մկրտել է տալիս հրապարակական ընկզմումով և բարոյիստ մնում մինջև կեսանքի վերջը:

Մկրտութիւնից իսկույն և եթ սկսեց քարոզներ անել և 18 տարին հաղիւ լրացած՝ բարոյիստ մի եկեղեցու քարոզիչ նշանակեց, 23 տարեկան՝ ընտրեց քարոզիչ Բիւրեղեան Պալատում (Palais de Cristal) ուր

1) Լատիներէն—կենդանի:

2) Որոնք երեխաների մկրտելը չեն ընդունում և մկրտում են միայն հասակ առածներին:

ժողովներ էին լինում շնորհաստանը քրիստոնէացեալու առիթով և Սպիր-  
ժոնը քարոզում էր 20—25 հազար ունկնդիրների առաջ:

Նա լատինի դարձաւ իբր նշանաւոր քարոզիչ և կարողացաւ միան-  
գամաբն գրաւել հասարակ ժողովրդի՝ մանաւանդ բանտրների սէրը: Կալ-  
ւինականութիւնը և սաստիկ ատելութիւնը դէպի Հռոմի եկեղեցին ճրա-  
լատկանիչ գծերն էին:

—Կարդինալ Մաննինգի (Manning) մասին արքան կասե՞ք որ նա  
առաջ պատկանում էր անգլիական եկեղեցուն, 1851 թ. 43 տարեկան  
ընդունեց կաթոլիկութիւն և 1875 թ. կարդինալութիւն ստացաւ Վիպրով  
են որ նա դարձանալի կերպով ճանաչել էր մարդկային սիրտը:

Մեծ դեր է կատարել մարդասիրական ընկերութիւնների հիմնարկու-  
թիւնների ժամանակ և մասնաւորապէս նա է հիմնադիր եղել Խաչի լի-  
գայի (Ligue de la Croix):

Անգլիայի բժշկական աշխարհը շատ կորուստներ ունեցաւ, որոնցից  
ամենանշանաւորն է սիր Մորէլ Մեկենզիի (sir Morell Mackenzie) մահը  
ինֆլուէնցայից:

Սա նա է որ խնամում էր հանգուցեալ Ֆրիդրիխ կայսրին և որ  
վարձատրութիւն ստացել էր Հոնենցոլլերն կարգի մեծ խաչ, իսկ չեսոզ  
1887 թ. Թագուհուց ստացաւ իւր յօբելեանին ազնւականի կոչում:

Գիտնականներից արձանագրութեան արժանի է աստղագէտ Ադամսի  
(Adams) մահը— որը Լըւերիէի (Leverrier) հետ միաժամանակ գտել էր  
Նեպտուն մոլորակը:

Գառաստանական աշխարհում տեղի ունեցան երկու պրոցեսներ որոն-  
ցից մինը՝ ազահարգանի գործ կոմսուհի Ռուսսելի (Russell) իրա ամուսնու  
դէմ, պրոցեսներ որոնք տակն ու վրա արին ամբողջ լրագրութիւնը՝ Տալմս  
լրագրից սկսած: Բանը նրանումն է որ գործերի քննութեան ժամանակ  
դէմ առ դէմ վկանների արած անտեղի հարցերից հրապարակ հանւեցան բո-  
լորովին անմեղ մարդկանց ընտանեկան կեանքի մանրամասնութիւնները և  
ալտեղից ծագեց կռիւ լրագրութեան մէջ թէ արդեօք հարկ կալ թող  
տալ վաստաբաններին անտեղի հարցեր առաջարկել վկաններին՝ ներկայ  
եղած հանդիսականներին մի քիչ զւարճացնելու մտքով:

Թատրոնական աշխարհի նորութիւնը Անգլիայում Հանրի ՎIII պիեսի  
կրկին երեալն է բեմի վրայ Ալթմ կան մարդիկ որոնք պնդում են թէ դա  
Նեքսպիրի գրւածը չէ, այլ ճրա ժամանակակից երկու բանաստեճների գործ.  
Ջոն Ֆլետչերի (John Fletcher) և Ֆիլիպ Մասսինգերի (Ph. Massinger).  
Լրագիրների ասելով երեսի իրւինգը (Irving) կատարում է խորամանկ  
կարդինալ Վոլսէյի (Wolsey) դերը շատ նուրբ կերպով:

Գեղարեստական աշխարհի նորութիւնը դասական նկարիչների ցու-  
ցահանդէսն էր: Ի ցուց էին դրւած 180 իւղաներկ պատկերներ և մօտ 100  
ակւարել, ամենը առաջնակարգ:

Յունւար և փետրւար ամիսներում լոնդոնի Ազգային բանաստեղծութեան (Folklore) ընկերութեան կալացած ժողովներին՝ Մ. Չերազ ներկայացրել է Ընկ. իր Եւէր պ. Գր. Խալաթեանցի աշխատութիւնները և այս վերջինիս լուսանկարը, քանի որ Ընկ. մտադրութիւն ունի օտար Ֆոլկլորիստներին լուսանկարներից մի ժողովածու կազմել:

Մի քանի տարի սրանից առաջ խտալիան վճռեց ևւրօպական առաջնակարգ պետութիւնների քաղաքականութիւնը բանեցնել:

Այս վճռի հետեանքը եղան պետական պարտքեր, սպառազինումն, երբեակ դաշնակցութեան անդամակցութիւն և նոյն իսկ հեռու ֆերիկական Աբիսինիալում կոլոնիաներ ձեռք բերելը:

Այս բոլորի հետեանքը նոր է լատնում ամենալն մերկութեամբ գրամական տազնապ (кряжесъ) և ընդհանուր ժողովրդական դժգոհութիւն:

Որոշեց Աբիսինիա ուղարկել մի մասնաժողով, որի անդամներից մէկը պ. Ֆերդինանդօ Մարտինի (M. Ferdinando Martini) իւր սպաւորութիւնների մի գիրք <sup>1)</sup> հրատարակեց, մի գիրք ուր երևում են հեղինակի թէ «ախրտը և թէ ջգերը»:

Ֆ. Մարտինին ներկայումս պատգամաւոր է, իսկ առաջ կոմիկական դերասան էր և նրա գրքից աչքի է ընկնում հեղինակի նկատողական խոշոր ձիրքը: Նա ամենալն բան տեսել է և նկատել. նա ոչ միւսն նկատել է աւազոտ երկիրը և անցել թունաւոր բույսերի և ծաղիկների կողքով—այլ և ընբռնել է երկրի հողին, իմաստասիրել նրա բարք ու վարքերը:

Նա տեսել է սեւմորթ կանանց սև իրանը և նրանց կրքոտ պարերը, նա լսել է պատերազմական և սիրույ երգերը, որոնք նույնպէս են ալրում ինչպէս որ կիզիչ արևը ալրել է երգողների սրտերը, նա ականջ է դրել ներշնչած manzarateh-ների պատմութիւններին իրանց նախնեաց փառաւոր արկածներին մասին:

Նա շրջել է այս չարաբաստիկ սովի դաշտում—ուր դիակները կարծես չարժոււմ են, մինչ այն աստիճան նրանք ծածկած են միջատներով, և ուր երեխայքը ազահութեամբ լափում են սատկած ձիաների փթող որովալնները...

Նա մտել է ռաւանարաններ, ուր փոքրիկ աբիսինիացիները կարդում են—պատմութիւններ՝ «բարի պատորը» կամ «ձիթեպտուղի հունձքը» վերնագիրներով—մինչ դեռ նոյն ալդ երեխայքը իրանց օրում ոչ պատոր են տեսել և ոչ էլ ձիթեպտուղ: Նա լսել է ալդ երեխայոց խմբովին երգելը «խտալիա երկիրը՝ քաջերի երկիր է» <sup>2)</sup>, մինչ դեռ նոյն ալդ երեխայոց

<sup>1)</sup> Nell' Africa italiana. Impressioni e ricordi, di Ferdinando Martini. Milano 1892.

<sup>2)</sup> L'Italie est une race des forts.

հալրերը սպանւած են եղել խտլացիներէ ձեռքով քաղաքակրթութիւնը տարածելու պատրուակով:

Մարտինին արնքան քաջութիւն ունի որ նկարագրելով այս երկիրը և խօսելով իրանց խտլացիներէ կոլոնիական քաղաքական կոմէդիակի մասին—բացականչում է՝ մենք՝—փարիսեցիներ ենք:

Մարտինիի գրքի մասին զեկուցանող օտարազգին շարունակում է իւր խօսքերը այսպէս:

«Սա միևնույն մշտնջենաւոր տխուր պատմութիւնն է, և խտլացիք բացառութիւն չեն կազմում այս դէպքում: Յանուն քաղաքակրթութեան գնում են հաստատում այն մարդկանց, այն ցեղերի մէջ, որոնք ոչ ոքի չեն խանգարում: Եթէ նրանք ապտտամբւում են՝ նրանց հրացանի ևն առճուս, որովհետև լարձակողները ղինւած են կառաքիններով: Եթէ նրանք տներ ունեն—նրանց դուրս են անում տներից և իրանք հաստատում մէջը:

Առաջ՝ վալրենի լինելով—նրանք կուտւմ էին եղբայրը եղբոր դէմ,— իսկ ալժմ նրանց կուսացնում են իրար հետ. բայց փոխանակ վալրենի միջոցներով իրար սպանելու՝ նրանց սովորեցնում են կատարելագործւած միջոցները: Բայց եթէ մի որ և է թշուառ մի դաւադրութիւն կազմի իրերի այս նոր դրութեան դէմ—վալ նրան—նրան կը մեխեն հրացանի զնդակներով, իսկ որբացած երեխաներին երգել կը տան՝ սխալիան քաջիւրի երկիր է...»

Յ.